

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱԾԱՆԵԱՆ - ԺԸ ԴԱՐԻ
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐ
ԿԵԱՆՔԸ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Համառոտ կենսագրութիւնը¹.

Յովհաննէս (աւագանի անունը՝ Յարութիւն) թովմաճանեանը ծնունել է 1717 թ. ապրիլի 22-ին, Կ. Պոլսում մահտեսի Արբաճամ ամիրա թովմաճանեանի ընտանիքում («Տայրենեօք յերկրէն թամգարայ»² եւ «ի Հայոց ուղղափառ ազգէ»)՝ 6-7 տարեկանում սկսեց ուսում ստանալ Սամաթիայի Ս. Գէորգ եկեղեցում, իսկ 12 տարին լրանալուն պէս՝ ուսանել ակնագործութեան («Յեվախիրնութեան») արհեստը: 1732 թ., Յորելեան տարուայ

¹ Յովհաննէս թովմաճանեանի կենսագրական տեղեկութիւնները հիմնականում քաղել ենք իր ինքնագիր «Պատմութիւն»-ից (տե՛ս Ս. Ղազարի Մխիթարեան մատենադարանի, ձեռ. թիւ 1688): Քանի որ Մխարանութեան յանձնարարութեամբ հրատարակութեան ենք պատրաստել այս բնագիրը, այստեղ անդրադառնում ենք կենսագրական հիմնական տեղեկութիւններին:

² Հայրնակ աւան Սերաստիայի վիլայէթում, Շապին-Կարահիսարից հիւսիս-արեւելք, կամ այս բնակավայրի արուարձաններից մէկը (տե՛ս Հ. Ղ. Իճճի-նեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Մասն առաջին, Ասիա, հտ. Ա, Վնենտիկ, 1806, էջ 326-327, Գ. Սրուանձտեանց, Վիճակագրութիւն Շապին Գարահիսարի. Թեմք., Գ. Սրուանձտեանց, Երկեր, հտ. 2, Եր., 1982, էջ 162. նախկին հրատարակութիւնը տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, դիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 529-536, նաեւ R. H. Kévorkian, P. B. Paboudjian, Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du Génocide, Paris, 1992, p. 249):

³ Իմա՛ հայ կաթողիկէ: Համաձայն Կ. Պոլսում Հռոմի եկեղեցու կողմից ուղարկուած առաքելական այցելու Դաւիթ կարմելիտականի տեղեկութեան, 1700-ական թթ. առաջին քառորդում քաղաքում կային մօտ 8000 հայ կաթողիկէներ (տե՛ս G. Hofmann, Il vicariato apostolico di Constantinopoli 1453-1830, Roma, 1935, p. 23):

եւ Սուրբ Դուան բացման կապակցութեամբ, հօր ուղեկցութեամբ ուխտի է մեկնում Հոռոմ եւ այդ առիթով այցելում նաեւ վեներտիկ՝ Ս. Ղազար: Թովմաճանեանների բարեպաշտ ընտանիքը Մխիթարեանների հետ սերտ կապեր ունէր դեռ Կ. Պոլսից, ուր հովուական առաքելութեամբ գտնուող վարդապետները նրանց ընտանիքի մշտական բարեկամներն էին: Փաստաթղթերի վկայութեամբ, այս տարիներից սկսած նրանց ընտանիքում քննարկուում էր իրենց որդուն Ս. Ղազար ուսման ուղարկելու հարցը:

Այս խօսակցութիւններին Մխիթարեան վարդապետների նամակներից տեղեկացուել է նաեւ Մխիթար Սեբաստացին, որ անձամբ եւ ամենայն բժարնդրութեամբ հետեւում էր նորընծաների հաւաքմանը, անընդհատ խորհուրդներ էր տալիս Պոլսում եւ Արեւմտեան Հայաստանում գտնուող վարդապետներին, թէ ինչ սկզբունքներով պէտք է ընտրուեն նրանք: Իր 1731 թ. ապրիլի 26-ի նամակում ուղղուած Հ. Պօղոսին (Կ. Պոլիս) նա պնդում է, որ նորընծաների թեկնածուները լինեն «յարմարք, այսինքն մարմնով առողջ, սրամիտք եւ հեզք: Որոնելի է գորքս եւ զաղբատս, միայն թէ իցեն ընտիրք»: Արբահայրն այնուհետեւ շարունակում է. «Մահտեսի Աքրահամի տղան մի՛ դնիցի ի թիւն: Քանզի նա միածին է հօրն, եւ ընդ նմին թէւ գայցէ՛ ընդ նմին դառնայ, զի ոչ ինքն կարէ տեսլ, եւ ոչ հայրն կարէ տանիլ զի թողցէ զմիակ որդին եւ դարձցի. թէւ այժմ ասիցէ տղան թէ մնամ, եւ հայրն ասիցէ՛ թէ թողում, եւ եթէ իբրու առժամանակեայ վասն աշխարհական լինելոյ կամիցի թողուլ առ մեզ. այս մեզ ոչ յարմարի, եւ ոչ գոյ մեզ վասն այսպիսեացս տեղի»⁴: Մխիթար Սեբաստացին սկզբնապէս դէմ լինելով Յովճանէս Թովմաճանեանի կրօնաւորմանը, ի վերջոյ, տեղի տալով ծնողների մօտ երկամեայ թախանձանքներին ու դիմումներին, արդէն 1732 թ. սեպտեմբեր 2-ին, Հ. Պօղոսին գրած իր նամակում նախկինի պէս կտրուկ չէր. «վասն հանի Աքրա-

⁴ Նամականի Մխիթարայ Աքրայի, [Ս. Ղազար, ա. թ.], հտ. Բ, թիւ 412: Նոյն օրն իսկ Հ. Յակոբ Բուզայեանին գրած նամակում Մխիթարը, նորից անդրադառնալով Պոլսից եկող աշակերտներին աւելացնում է. «Հ. Թովմաս վարդապետն գրեալ է, թէ հանի Աքրահամն գալոց է որդուվն, եւ գորդին դնելոց է ՚ի վանքն եւ այլն: Ջորդի նորին ոչ պարտիս դնել ՚ի թիւս պատանեացս, զի այն նորա միակի որդի է. եւ ոչ կարէ տեսլ. նա եւ իսկ հայրն ոչ կարէ տանիլ՝ զի թողցէ զմիակ որդին: Եւ եթէ առժամանակեայ դիցէ, այս մեզ ոչ յարմարի եւ վասն այնպիսեաց չունիմք գտեղի եւն. ուրեմն այն ՚ի մէջ թուոց ոչ է դասելի» (Նոյն տեղում, թիւ 413):

համի որդւոյն՝ ըստ որում գրեալ եմ եւ յանձնեալ՝ այնպէս արարեմք, եթէ գալոյ լինիցի, եւ եթէ խափանիցի գալն՝ այն լաւագոյն է քան զամենայն»⁵: Իսկ 1733 թ. ապրիլի 8-ի Հ. Թովմային (Կ. Պոլիս) հասցէագրուած նամակից երեւում է, որ Արքահայրը արդէն հաշտուել էր Յովհաննէսի գալու մտքի յետ. «Իմացայ. զի հանի Արքահամի որդին չուելոց է... Սակայն մինչեւ նաւն ոչ չուիցեն այդի՝ ոչ հաւատամ. զի կասկած գոյ, թէ գուցէ վերստին փոխիցեն հայրն կամ մայրն զմիտս իւրեանց եւ արգելցեն զպատանին, եւ նա ի սաստկութենէ ցաւոյն զրկիցի եւ ի կենաց» եւ նամակի վերջում յանձնարարական. «Հանի Արքահամին եւ տան իւրոյ մատո՛ յինէն զողջոյն սիրոյ. եթէ զորդին իւրեանց յղեալ եմ՝ ինդրեմ զի մի լայցեն զկնի նորա, այլ ուրախ լիցին զի Արքահամու եւ Սառայի նմանեցան. եւ թէ ոչ յղեցին, պարզապէս զողջոյն մատո, եւ զորդի նոցին իրատես զի հնազանդ լիցի ծնողացն...»⁶:

Յովհաննէս Թովմաճանեանը 1733 թ. յունիսի 12-ին Իզմիրից նաւով դուրս եկաւ դէպի Լիւռնոյ, ուր հասաւ օգոստոսի 5-ին եւ Արքահօր կարգադրութեամբ մնաց Զաքարիա Շահումենց տանը, որտեղից էլ նրա հօրեղբորորդու՝ Սիւնեաց ապստամբութեան վարձանից յետոյ Իտալիա ապաստանած Ստեփաննոս Շահումենի ուղեկցութեամբ ցամաքային ճանապարհով վենետիկ հասաւ 1733 թ. հոկտեմբերի 17-ին: Ս. Ղազար հասնելուց հինգ ամիս յետոյ, 1734-ի փետրվար 15-ին, իր իսկ հաղորդմամբ, «ես նմա Մխիթար Արքայ հայր զգգեստ կրօնի եւ զփիլոն, յամի Տեառն»⁷, իսկ սեպտեմբերի 15-ին արեց կրօնաւորութեան ուխտը⁸:

⁵ 'Նամականի Մխիթարայ Արքայի, հտ. Բ, քիւ 434:

⁶ 'Նամականի Մխիթարայ Արքայի, հտ. Բ, քիւ 452:

⁷ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Մ. Կարապետեան, *Հայերը վենեկցիում* 1750 թուին (Ա).- Զանդէս Ամսօրեայ, 2008, էջ 220-226:

⁸ Թովմաճանի նշած թուականը հաստատուում է նաեւ այլ աղբյուրներով: Մխիթար Սեբաստացին 1734 թ. փետրուարի 10-ի նամակում, ուղարկուած Կ. Պոլիս՝ Հայր Թովմասին գրում էր. «Եւ յայսմիկ ամսոց ուխտեն Կուժիտան, Մկրտիչն եւ Ստեփանն. նաեւ հանի Արքահամի որդին, որ նաեւ տիրացու օրհնեցաւ ի ամին ամսոց, առնու գուրբ զգեստ կրօնին» (Նամականի Մխիթարայ Արքայի, հտ. Բ, քիւ 465): Սուրբ Ղազարի դիւանում պահուող «Ցանկ անուանց նորրնձայից եւ ուխտելոց» (1719-1845) ձեռագիր մատենանում (թերթ 15ա) կարգում ենք. «Յձմի տեառն 1734 ի փետրվարի 15. Առ ընկալաւ զգգեստ կրօնին մերոյ սամաքիացի Թովմանեօղի Լանի Արքահամի որդին Յարութիւնն, եւ անուանեցաւ Յօհաննէս: Եւ

Չորս տարի անց, 1738 թ. սեպտեմբերի 13ին, Յովհաննէս Թովմաճանեանը Վենետիկից նստում էր Կ. Պոլիս ուղեւորուող նաւը, մոռանալով իր արած ուխտն ու անխոհեմօրէն անտեսելով իր հոգեւոր մեծաւորի յորդորը: Պատճառը Պոլսից հասած հօր մահուան բոթն էր, եւ, յատկապէս, ազգականների բարձրացրած աղմուկը տիրանալու համար հանգուցեալի ունեցուածքին: Ինքն անձամբ, տարիներ անց գրուած իր աշխատութիւնում, ի շարս վանքը թողնելու պատճառների, թուարկում է նաեւ իր բացակայութեամբ պատճառարանուած հօր ունեցուածքին յաւակնող ազգականների յարուցած խնդիրը, թէ՛ «Եթէ յերկիր քրիստոնէից է, ի քաղաքէ աստի այլազգեաց յերկիր անդր քրիստոնէից ոչ անկանի բաժին ժառանգութեան»¹⁰: Յովհաննէսին յաջողում է մէկ տարուայ մէջ կարգի բերել հօր սեփականութեան շուրջ առաջացած հարցերը եւ 1739 թ. դեկտեմբերի 23ին կրկին վերադառնալ Վենետիկ, ուր էլ պարզում է, որ իրեն առջեւ փակուել են վանքի դռները: Միանշանակ պարզ էր Միաբանութեան բռնած դիրքը՝ Հոգեւոր ուխտի եւ մեծաւորի հրամանի զանց առնելը, ինքնագլուխ վանքից հեռանալը եւ այլն:

Մխիթար արբահայրը, գասեր քաղելով կացութիւնից, խորազխտօրէն հասկանալով նորահաստատ միաբանութեան համար նոր մարտահրաւէրներին ու գայթակղութիւններին զիմազրաւելու կարեւորութիւնը, արգէն իր վանականներին հրահանգներ էր ուղարկել (1738 թ. սեպտեմբեր) նորընծաների ստանձնելիք պարտաւորութիւնների մասին. «... յայսմ հետէ յառաջադրեալ եմ զայս թէ յորժամ նորընծայ ոմն՝ որոյ հայրն իցէ ունեւոր եւ հասանիցի նմա ժամանակն ուխտելոյ ոչ ընդունեցայ ի կրօն, եթէ նախապէս ի հայրենական ժառանգութեանէն ոչ հատանիցի իւր ձեռագրովն: Այսինքն նախապէս գրեմ, նաեւ նմա տամ

յայսմանէ օրէ ամն փորձութեան էառ գսկիզբն: Եւ Հ. Ստեփան վարդապետ [Եղոկացի] վարժօղ նորընծայից յատկաւ ձեռաք իմով գրեցի, եւ սովորական կնիով մեներանին հաստատեցի: Սա եզբեաց զամն փորձութեան. եւ ուխտեաց օրինապէս յամի տեսոն 1735 ի սեպտեմբերի 15 [կնիք]:»:

9 Հմմտ. Մխիթար Սեբաստացու 1735 թ. հոկտեմբերի 10-ի նամակը Հ. Թոմասին (Կ.Պոլիս). «... Իսկ ի հնգետասան, ի նոյնոյ ամսոյ [սեպտեմբերին] Ովանէսն արար գուխոսն, այսինքն որդի հանի Աքրախամին» (տե՛ս նամակակնի Մխիթարայ Աքրայի, հտ. Բ, քիւ 506):

10 Օսմանեան կայսրութիւնում մահացածի ժառանգութիւնը չէր հասնում որեւէ մէկին, որ դառնում է նրա սահմաններից դուրս, նոյնիսկ աշխատում էին դուրս չթողել երկրից որեւէ մէկին, եթէ այն մեկնում էր Եւրոպա:

գրել առ հայրն, թէ ահա որդիդ ուխտելոց է, եթէ կամիս գիր ինչ տալ նմա, եւ այնու հանել զնա յիրաւանց ժառանգութեան, տուր եւ հան. եւ թէ ոչ կամիս տալ գիր ինչ նմա, դու գիտես, մի տար. սակայն ժառանգագուրկ արա զնա յընչիցդ ըստ ամենայնի, զի ընդ մեռանիւն ձեր, սա զինք հեւեւէր ոչ քանաչիցէ. նաեւ այլ ոչ քանաչիցեն զսա հեւեւէր: Եւ աստի նաեւ ի նմանէ՝ որ ուխտելոց է՝ զգիր հրաժարման ի հեւեւէն տամ առաքել առ ծնողսն, եւ այսու զերծանիմք յայսմանէ չարե...»¹¹:

1740-1742 թթ. Յովհաննէս Թովմաճանեանը անցկացրեց Հռոմում, Հաւատաստիւն Ժողովին բողոքարկելով եւ պահանջելով վերականգնել իր հոգեւոր աստիճանը¹²: Ստանալով բացասական պատասխան, ի վերջոյ, ստիպուած է լինում յանձնել հոգեւորականի փրկոնը եւ 1742 թ. մայիսի 2-ին վերադառնալ Կ. Ժոյիս: Սակայն, պէտք է նշել, որ նոյնիսկ զբանից յետոյ, Թովմաճանեանի կողմից պահպանուեց պատկառանքի հասնող վերաբերմունքը Մխիթար արքայի նկատմամբ, ամենասերտ յարաբերութիւնները եւ նամակազրական ու ջերմ բարեկամական կապերը Մխիթարեան շատ վարդապետների հետ: Հետագայում Թովմաճանեանը բազմիցս օգտակար եղաւ Միւրաբնութեանը գրավաճառութեան¹³ եւ մշակութային նորանոր արժէքներ ձեռքբերելու¹⁴

¹¹ Նամականի Մխիթարայ Արքայի, հտ. Բ, թիւ 597:

¹² Հաւատաստիւն Ժողովին Յովհաննէս Թովմաճանեանի գլխաւոր դիմում-բողոքը Մխիթար Սերաստացու դէմ տե՛ս Archivio della S. Congregazione di Propaganda Fide (APF), SOCG, Vol. 708, ff. 431r-452v: Կարդինալ Պետրային (Vincenzo Petra) ուղղուած նամակը նոյն տեղում է. 454v (հասցէն՝ է. 457v), կարդինալ Գարաֆալին հասցէագրուած բողոքի նամակը նոյն տեղում (է. 455r): Հաւատաստիւն Ժողովի հարցմանն ի պատասխան Մխիթար Սերաստացու 12 կէտանոց մերժումնազիրը Թովմաճանեանին կրկին վանք ընդունելու անհնարինութեան մասին տե՛ս հայերէնը՝ Նամականի Մխիթարայ Արքայի, հտ. Բ, թիւ 677 (1741, մարտ 16), իտալերէնը՝ APF, SOCG, Vol. 708, ff. 467r-468v (հրատ. տե՛ս Mechitar di Sebaste. Lettere e documenti. 1705-1749, Venezia-San Lazzaro, 1980, p. 175-179, նաեւ 153-155): Հռոմում Թովմաճանեանի գործունէութեանը ակնդէտ հետեւում էր նաեւ Յովհաննէս Պատկերահանը (տե՛ս Յովհաննէս Պատկերահան. Նամականի (1695-1758), Աշխատասիրեց Է. Սահակ Յնամեմեան, Վեներտիկ-Ա. Ղազար, 1988, էջ 30-31, 40-43, 48-50, 56-57, 114, 252 եւ այլն):

¹³ Թովմաճանեանի կողմից Մխիթարեան գրավաճառութեանը լայնօրէն աջակցելու վերաբերեալ բազում տեղեկութիւններ պահպանուել են միւրաբնների եւ մշակոյթի գործիչների նամակներում: Բաւական է յիշատակել նշանաւոր

գործում, հովուական առաքելութեամբ տարբեր երկրներում դե-
գերող Մխիթարեան վարդապետներին¹⁵ :

Մանկուց քաջածանօթ լինելով ակնագործութեանը եւ շնոր-
հիւ իր բնածին աշքարացութեանն ու ճարպկութեանը, 1742-
1749 թթ., Յովհաննէս Թովմաճանեանը Կ. Պոլսում բացում է
խանութ եւ աշխուժօրէն զբաղում ակնավաճառութեամբ: 1749-
ից մինչեւ 1789 թթ. Թովմաճանեանը առեւտրական բազմաթիւ
ճանապարհորդութիւններ է կատարում զանազան ուղղութիւննե-
րով: Թովմաճանեանի կազմած եւ ստորեւ բերուող ցանկը (ձեռ.
1688, թթ. 257v-258r), կարծում ենք, լիակատար պատկերացում
է տալիս միջազգային առեւտրական ճանապարհների վրա հայ
ակնավաճառի անցած կեանքի ուղու մասին.

ԵՐԵՍՈՒՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՔԻ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՅՑ ԵՒ ԻՆՔՆԻՇ-
ԽԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆՅՑ, ՅՈՐՄ ՇՐՋԵՅԱԻ ԶԵՐԻՍ ՄԱՍՆ
ԱՇԽԱՐՀԻՍ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ ՏԵՐ ՄԱՀՏԵՍԻ ՅՈՎՀԱՆՆԵԱՆ
ԱՅՍԻՆՔԻ ՅԵՒՐՈՊԻԱ, ՅԱՍԻԱ ԵՒ ԱՓՐԻԿԷ, ԶՈՐ
ԿԱՐԳԵՄՔ ԱՍՏԱՆՕՐ ՍԿՍԵԱԼ ՆԱԽ Ի ՅԵՒՐՈՊԻՈՅ:

1. Կոստանդնուպոլիս, որ է քաղաւորանիստ քաղաք օսմանց-
ւոց յորում ծնաւ նա ինքն Թովմաճան:
2. Ուլախու երկիրն իշխանութիւնք պոյարեաց երիցս անգամ:
3. Պուռիմ եւ Բեշտ քաղաւորական քաղաք Մանաթի ի յորս է
ի Թրանսիլվանեան Կերլէ եւ Պաշվալու Հայոց չորիցս անգամ:
4. Վիեննա կայսերանիստ քաղաք երիցս անգամ:

պոլսահայ հրատարակիչ Պօղոս Արապեանի անտիպ նամականին, ուր վեր-
ջինս հաղորդում է Ղալաթիայում Թովմաճանեանից գրքեր ձեռքբերելու
(1781 թ.) մասին (Ս. Ղազար, ձեռ. թիւ 2690, թ. 3v):

14 1753 թ. Կ. Պոլսից Մխիթարեան վարդապետների նամակները վկայում են,
որ Յովհաննէս Թովմաճանեանը շատ գործուն դեր ունեցաւ Պոլսում յայտ-
նուած «Համատարած աշխարհացոյց»ի (Ամստերդամ, 1695) պղնձէ տախ-
տակների ձեռքբերման եւ սպա վենետիկում նոր տպագրութիւն պատուի-
րելու գործում (մանրամասն տե՛ս Հ. Սահակ Ճեմնեմեան, Քարտիսագրու-
թեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ ԺԸ դարուն, Վեներիկ-Ս. Ղազար, 1981,
էջ 5-12):

15 Տե՛ս Հ. Պօղոս Մէհէրեանի 1773 թ. տեղեկատուութիւնը Եգիպտոսում Յով-
հաննէս Թովմաճանեանի կողմից իրենց նկատմամբ գրեւորած վերաբեր-
մունքի մասին (Ս. Ղազար, ձեռ. 560 (Գ ը), թթ. 55r-56r):

5. Վենետիկ՝ ութ անգամ:
6. Հոռոմ, նստեալ անդ զամիսս 20 եւ հնգիցս գնացեալ:
7. Նարոյի թագաւորանիստ ֆաղափ՝ չորիցս, եւ քազում վաճառս արար:
8. Կրան տուգայ տի Թօսկանայի երկիր Ֆիեօրենցայ, Լիվօնոյ, Բիզայ եւ երկիցս անգամ:
9. Բառէզ թագաւորանիստ ֆաղափ Ֆրանսիզու եւ ընդ Լուիսի 15երորդի թագաւորին երկարապէս խօսիլն:
10. Մարտամ, որ է Օլանտայ՝ 47 օր եկաց անդէն:
11. Ինկիլթեոյ, որ է Լօնտոյ: 6 ամիս եւ կէս եկաց:

ԵՐԿՐՈՐԴ Ի ՅԱՍԻԱՅ:

12. Եգիպտոս մեծ թագաւորանիստ ֆաղափ երբեմն երկիցս գնաց:
13. Երուսաղէմ՝ 8 ամիս նստաւ, որ է Հրէաստան:
14. Թաիիր Օմէրի երկիր, Աքեայ՝ Նագարէթ եւ այլակերպութեան լեանն, եւն:
15. Ճիստէ ի Կարմիր ծովն Շէխ Շէրիֆի երկիր երկիցս անգամ:
16. Մուխայ, Ճէզան Լօհիայ որ է երկիր Եմէնու որ եւ ասի Երջանիկն Աքարիայ, եւ է ընդ տէրութեամբն շէխ իմամին որ նստի ի Սանաար:
17. Սուրէթ առաջին նաւահանգիստ Հնդկաց, եւ է մեծ ֆաղափ Մուհամմէտ Ալի խանին եւ Ինկլիզաց:
18. Բունայ ֆաղափ Մարաթու կռայաշուն Նանա թագաւորի:
19. Հայտարապատ մեծ ֆաղափ Հնդկաց թագաւորի:
20. Մուշիլ քաթան Տէմիր խանին:
21. Մատրաս եւ Մելապուր ֆաղափ յորս է գերեզման սուրբ Թովմայ առաքելոյն:
22. Բունթուշերի մեծ ֆաղափ Գումբանուն Ֆրանցիզաց:
23. Թրնկպար Տանիմարգի ուր խաղող լինի:
24. Նակուր մեծ ֆաղափ Կենեաւուր ուէնայի:
25. Նեկրաթան Օլանտըզի Գումբանուն է:

ԵՐՐՈՐԿՆ Ի ԱՖՐԻԿԱՅ

26. Աղեխասնդրիա մեծին Աղեխասնդրի թագաւորին է, երիցս անգամ:

27. Մտվայ է փոքր կղզի ի Կարմիր ծովն, ուր յառաջ նստէին բաշայք, այժմ նստի փոխանորդ Ճիտտէի բաշային, եւ է մերձ ի Աֆրիգայ՝ ի Հարգիգօն կէս միղոնաւ հեռի եւ է նաւահանգիստն Հապէշու եւ Հարգիգօն նայիպ էֆէնտիին ինքնիշխան տէրութիւն է:

28. Ատվայ առաջին ամհարայք հապէշից, որ ի ներքոյ իւր հրամայէ տեղեաց 8 բաշայից:

29. Տիկնոջն Սարայի քաղաք եւ մեծաշէն քարեա պալատ եւ մեծամեծք արձանք երկոտասանք են:

30. Կեօտէր թագաւորանիստ քաղաք Հապէշու, յորում եկաց անդէն Թովմանանն գանձապետութեամբ իբր գամս երկուս:

Մօտ քառասուն տարի Արեւելքի եւ Արեւմուտքի միջագոյնն առեւտրական ճանապարհներին կեանքն անցկացրած, բազում փորձութիւններին ենթարկուած, սակայն իր քրիստոնէական բարեպաշտութիւնը չկորցրած հայ աղամանդավաճաւոր, 1790 թ., 74 տարեկան հասակում, թողեց իր ընտանիքն ու աշխարհիկ կեանքը եւ ընդունելով հոգեւոր աստիճան, ծառայութեան անցաւ Ս. Ղազարում: Յովհաննէս Թովմանանեանը վախճանուեց 1806 թ. յունուարի 25-ին Ս. Ղազարում¹⁶:

Մատենագրական վկայութիւններ

Յովհաննէս Թովմանանեանի մասին առաջին մատենագրական տեղեկութիւնները հրապարակուեցին իր իսկ կենդանութեան օրօք:

Հ. Միքայէլ Չամչեանը իր «Պատմութիւն Հայոց»-ում 1762 թ. Կ. Պոլսում Հայոց պատրիարքարանի եւ հայ կաթողիկէների

¹⁶ Տե՛ս Միքայէլ Միքայելեան յորելեան. 1701-1901, Վեներտիկ-Ս. Ղազար, 1901, էջ 217: Ս. Ղազարի միարաններից Հ. Մինաս Բժշկեանը իր Օրագրութեան մէջ 1806 թ. յունուարի 25ին արձանագրել է. «Վախճանեցաւ ի բարեօք ծերութեան ութսուն եւ ինն ամաց Թովմանանեան տէր Յովհաննէսն» (տե՛ս «Օրագրութիւն Հայր Մինասայ վ. Բժշկեան. 1796-1851», - Ս. Ղազարի Դիւան):

ԹԵՐԹ՝ 1+258+1 (հեղինակային էջակալում՝ 1-527: էջադրելիս վրիպմամբ 433 էջի փոխարեն գրել է 434, այդ իսկ պատճառով այստեղից սկսած մինչև վերջ մէկ էջի խախտում կայ եւ գոյգ էջահամարը գտնուում է աջ կողմում): Ձեռագրում եղած ներդիր փաստաթղթերը չեն էջակալուած: ՊՐԱԿ՝ Ա-Ժէ (Ա-Դ, Թ՝x12, Ե-Ը՝ 14, Թ՝ 12, Ժ, ԺԲ, ԺԵ՝ 16, ԺԱ՝ 20, ԺԳ, ԺԴ՝ 24, ԺԶ՝ 8, Ժէ՝ 18)+1: ՆԻԻԹ՝ թուղթ. եւրոպական, լուսագծերով, եզրերը չկտրուած: ՉԱՓԵՐՈ՝ 23,5x17,2: ԳՐԱԳԱՇՏՈ՝ միասին (19x12, 19,5x12,5, 19,5x13, 19,7x13): ԼՈՒՍԱՆՑՔՆԵՐՈ՝ 3,5, սահմանագծուած: ԳԻՐ՝ շրագիր, բոլորգիր: ՏՈՂ՝ 31: ԿԱԶՄ՝ ստուարաթղթէ միջուկով դեղնագոյն մուկաթ. աստառ՝ սպիտակ թուղթ, չափերը՝ 18x24x4: Կազմի ներսում՝ «EX BIBL. ARMEN. S. LAZARI Բ.Զ.», առանձին թերթիկի վրայ՝ «1688. Զ.Դ.»: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1+1, թուղթ, չգրուած: ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ՝ չունի: ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ քազում: ՎԻՃԱԿ՝ քաւարաթ. թերթեզերքը կանոնաւոր: Բնագիրը հեղինակի կողմից, մինչև իր մահը, քազմիցս վերանայուել է, լուսանցքներում արուել են քազում սրբագրումներ եւ յաւելումներ:

ձեռագրի սկզբում
թ. 3ր,
չհամարակալուած

1 դատարկ, չհամարակալուած թերթ:
Տիտղոսաթերթ՝ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԷՐ
ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԹՈՎՄՄԱՃԱՆՆԵԱՆ, որ գամս երեսուն ՚ի կեսն իւր շրջեցաւ յԵւրոպիայ, յԱսիա, ՚ի Հնդկիս եւ յԱփրիկէ, ՚ի Հասկէջստան, շարադրեալ ի նոյն ինքն ՚ի Թովմանանէ՝ հրամանաւ վեհին իւրոյ արքայի ՚ի Վեներտիկ, ի վանս Սրբոյն Ղազարու: ՚ի հայրապետութեան տեսնելու Դուկասու հայոց կաթողիկոսի ՚ի թուականիս Փրկչին 1790 ՚ի դեկտեմբեր 15. իսկ ըստ Հայոց ՈՒՄԼԹ:

թ. 3v
թ. 4r-5r
թ. 5v

դատարկ, չհամարակալուած
յԱռաջարանութիւն (չհամարակալուած)
այս էջին փակցուած է 1749 թ. Վենետիկում հրատարակուած «Համատարած Աշխարհացոյց»-ը¹⁹:
(չհամարակալուած)

19 *Բնագիրը տե՛ս Հայկազեան Բաւարանի Ա. հատորի 258-259 էջերի միջև (այս քարտէջի մասին տե՛ս Հ. Ս. Ճեմնեմեան. Քարտիսագրութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ..., էջ 12-15):*

- p. 6r վերնագիր՝ վարժ և պատմութիւն
Թովմանեանեան մատենայի Տէր Յովհաննիսի կուստանդինուպոլսեցոյ, որոյ ընդ երեսուն տէրութիւնս շրջեալ վանառականութեամբ և հուսկ յետոյ վերստին դարձ արարեալ ՚ի բնիկ քաղաք՝ իւր ՚ի Կոստանդինուպոլիս՝ ձեռնադրի անդ քահանայ յիջնատիոս եպիսկոպոսէ՝ յետանասներորդ ամի հասակի իւրոյ և ապա եկեալ դադարէ ՚ի վանս յարունապետին մեծի Մխիթարայ արքայ հոր, որ ՚ի Վեներիկ:
- p. 6r-9r Գլուխ Ա. Որ ինչ անցք անցին ի մանկութեանն ցամա հնգետասան սկսեալ ՚ի ծննդեցէ անտի՝ յամէ տեառն 1717
- p. 9r-12r Գլուխ Բ. Յաղագս գնալոյ գառաջինն ի Վենետիկ և ի Հոովմ ընդ հոր իւրոյ և թէ գիտից ևղև և ո՛յք էին ուղեկիցք նորա:
- p. 12r-14r Գլուխ Գ. Յաղագս երկրորդ նուագի գնալոյ Յարութիւնին ի Վենետիկ ի վանս մեծի արքային 1733:
- p. 12v-13r միջև ներդիր²⁰ *Մխիթար Սերաստացու 1733 օգոստոսի 22 թուակիր նամակը Յովհաննէս Թովմանեանին («Յարութիւն պատանու») .*
- Բազմա ողջունի ծանիր Յարութիւն, զի զգիրդ զոր ի 12 օգոստոսին գրեալ էր առ մեզ ի նագարէքէն՝ ընկալաք. և իմացաք, զի խաղաղութեամբ հասեալ էք այդր...²¹:

²⁰ *Մխիթար Սերաստացու գիւանը կարգի բերելու և հրատարակութեան պատրաստելու ժամանակ, այս և ձեռագրում եղած արբաճօր միւս թղթերը հանուել են ձեռագրից: Այդ մասին ձեռագրի յուսանցքում մատիտով լրացուած է. «բնագիրը այս բուդրիւն, էջ 15՝ հանուեցաւ և փոխադրուեցաւ Մխիթարայ Բողոքոց դիւանը. 2[այր] կ[արապետ] Ա[մատուցի] 26-1-1949»:*

²¹ *Թովմանեանի կողմից իր ձեռագրում արտագրուած այս նամակը ունի որոշ տարբերութիւններ Արբաճօր նամակի բնագրից տե՛ս նամականի Մխիթարայ Արքայի, Բ, 456, էջ 203): Նամակի վերջում հասցէն՝ «Շնորհ արարեալ, հաստ զայս գիր ի նագարէքն, ի ձեռն Յարութիւն պատանույն Ստամպուլոյ: Al Molt. Ill.re e Rev.do P.rone Osservd.mo. Il Sig.re D. Stefano di Cacciatur, sacerdote Armeno e Missionario App.lico per gli Armeni di Livorno. Chiesa di Armeni Livorno»:*

- 13v-14r միջև *Մխիթար Սերաստացու 1733 սեպտեմբեր 19 թուակիր նամակը Յովհաննէս Թովմանահանին*²².
- Բազմաւ օրհնութեամբ ծանի՛ր Յարութիւն, գի
ես զգիրն Էո առի, եւ իմացայ, որ դու հետ Մի-
բէլին գալ չես ուզեր, այլ կ'ուզես միմակ լի-
նիլ:...²³
- 14r-20r Գլխի Պ. Յաղագս հնգամեայ ժամանակօք ի
վանս նստելոյ եւ գերկեամ մի դեզերելոյ գկնի
մահու հօրն երթելութեամբ ի Կոստանդի-
նուպօլիս եւ ի Վենետիկ եւ ոչ ընդունելի լինե-
լոյ ի վանս:
- 17v-18r *Մխիթար արբաճօր 1739 թ. նամակը.*
- Դու, որդի Հանի Աբրահամին Թովմանահանան,
մի՛ եկեսցես ուղիղ ի Նազարէքէն ի վանս մեր,
այլ գնացես ուղիղ ի Վենետիկ եւ նստցիս ի
տան միոջ եւ կամ եկեղեցւոյն Հայոց, յորում է
Տէր Նդիագար տայիդ, մինչև որ ես Հայր Աբ-
րաս կոչեցից զքեզ եւ խօսեցայց ընդ քեզ...:
- 19r *լուսանցքում եղել է փակցուած (ստանձի հետքեր)*
փաստաթուղթ ի լրումն ներքեւից երբորդ առդի՝
«Եւ ետ գիր ուիջեվութայի ըստ պահանջելոյ եւ
ըստ տունալ օրինակի Աբրայիմ»
նախադասութեան: Յիշեալ ստացականը ձեռագրում
բացակայում է:
- 20r-22v Գլխի Ե. Յաղագս դեզերելոյ ի Հռոպմ՝ գամիսս
բան. եւ թէ որպէս էաւ գտնօրինումն ուխտին
եւ եկն անդրէն ի Վենետիկ ի զգեստս
աշխարհական, եւ թէ որպէս սիրալիք ընտանու-
թիւն եւ սեր ընկալեալ ի Մխիթարայ արբայէ...:

22 Թ. 13v՝ *լուսանցքում մատիտով լրացուած է՝* Այս նամակի բնագիրը տե՛ս ՃԽԹԸ. Աբրայի նամականիի հաւաքածոն Հ[այր] Կ[արապետ] Ա[մատու-
նի]: Տեքստում արտագրուած այս նամակը ունի որոշ տարբերութիւններ
Արբաճօր նամակի բնագրից, տե՛ս նամականի Մխիթարայ Աբրայի, հտ. Բ,
456, էջ 204:

23 Տե՛ս նամականի Մխիթար Աբրայի, հտ. Բ, թիւ 457: Վերջում հասցէն՝ «Ի
ձեռն ստամպօլցի Յարութիւն պատանոյն հասցէ ի քարին ի Նազարէք-
յԱլիկօնա»:

23r-31r

ԳԼՈՒԽ Զ. Յաղագս վանառականութեանն ի Կոստանդինուպօլիս սկսեալ յամբ 1742 ի մայիս ամսոյն մինչեւ ի 1749: Մինչչև էր քաջ տեղեակ արհեստին եւ թէ ո՞րպիսի յաջողութեամբ յառաջացաւ եւ թէ ո՞րպիսի մեծ ընտանութեամբ իբր որդեգիր սիրելի եղև յաչս Յակոբայ պատրիարգի նախեան...:

27v-28r միջև
թերթիկի վրայ՝

յատուկ նշանով լրացուած է էջ 44-ի տեքստը «Յայսմ եւ ի սոյն ամ 1746 պատրիարքն Հայոց Յակոբ վարդապետ նախեան» բառերից յետոյ՝

- քազում թոյտուութիւնս ետ ուղղափառաց եւ նո՛ւա եւս, քան զարժանն համարօական, անցին ըստ չափ, մինչև սկսան քահնայթ՝ նոցին զքաղումն իսկ առնել մեռելոց. որպէս եւ ի միում նուագի խպրցցի Յակոբ Վարդապետն, որ ի Փոքրականտայէ եւ Շերպէթնի Օղլու Տէր Սէրգիսն եւ Տիպանի Օղլու Տէր Սէրգիսն (այն, որ յառաջագոյն ի Հայոց քահնայից անտի էր եւ ապա յուղղափառութիւն եկեալ, դիմեաց ի Հռովմ, ակնկալութեամբ վարձս ընդունելոյ եւ յոչ վարձատրիլն՝ եղև ի դարձին չար քան զառաջինն):

31r ստանձուած եւ
ծալուած թերթիկի
վրայ՝

- եւ յետ այտրիկ, յամբ 1749 ի մարտի 26, որ էր օր Զատիկի, զնեաց թովմանն զշաքարեղևն եւ զծաղկունս եւ առեալ երբայր ի շնորհաւորութիւն Սրբոյ Յարութեան առ Համպագ Օղլու ազգականն իւր, որ էր փեսայն նորի քեռն ... Իսկ զՅակոբ նախեան առաջեցին յինն Առաջնորդ ի Պուոսս եւ ապա յղեցին յերուսաղէմ, յինիլ անդ Պատրիարգ, ուր եւ եկաց նա ամս երկու, մինչև ի գալ անդր յուխտ Եազուպ աղային, որոյ եղևալ Պատրիարգ Երուսաղէմի գթորոս Վարդապետ, էառ եւ նքեր ընդ իւր զՅակոբ Վարդապետ եւ կարգեաց զնա վերստին Պատրիարգ Կոստանդինուպօլսոյ յամբ 1752, որպէս պատմելոց եմ յիւրում տեղուց:

31v-37v

ԳԼՈՒԽ Է. Յաղագս ընդ նամապարհորդութեան յարեւմուտոս՝ վասն զնալոյ յուխտ յորելեան ներդրութեան ի Հռովմ, մի քստ միոջէ նշանակելով զանուանս քաղաքաց եւ գեօղից եւ զդիպուածս պէսպէս եւ թէ որպէս ի Վիեննա որդեգրեցաւ մուսու տէ Ֆրանչիի՝ զանձապետի թագուհւոյն:

- 37v-43r ԳԼՈՒԽ Ը. Յաղագս գնալոյ ի Հոռով՝ եւ թէ ո՞րպիսի հնարիւմ եմուտ ի տեղի քացման Դրանն Սրբոյ եւ թէ ի Նեապոլիս ո՞րպէս վանատեաց թագուելոյն զ4000 ոսկւոյ օղ մարգարիտ:
- 43r-49v ԳԼՈՒԽ Թ. Յաղագս տալոյ ուխտաւորացն հալոց արգուհալ առ Սրբազան Ժողովն փրօփականտա- յի՛ ի ձեռն Թովմանանի վասն բանի հաղորդելոյ ընդ հայս յեկեղեցիս նոցին գնալոյ եւս եւ յաղա- գս հրաւիրելոյ նորա զսրբազան պապն զպլ յե- կեղեցին հալոց ի Սուրբ Մարիամ եգիպտացի եւ դարձ ի նորա ի Կոստանդինուպոլիս:
- 44r փակցուած մէկ ու կէտ էջերի վրայ *Ի Հաստատումն ընագրի թթ. 44r-46v-ում մէջջրերուած Հաստուածի պատեղ փակցուած է տուեալ փաստաթղթի հայերէն կնքուած ընօրինակը՝ հետեւեալ պարզաբանմամբ՝ «Այս է քուն պատնէնն ընծայեալ յատեանն Սրբազան Ժողովոյն»²⁴:*
- 47v-48r միջեւ փակ- ցուած մէկ թերթ գրութիւն 48r յուսանցում՝ Թովմանանի ձեռօք տրուած քացատրու- թեամբ *Ստեփանոս Մելքոնեան արքահօր 1750 ի մայիսի 9 քուակիր «եղբայրակցութեան ձեռագիր» Յովհաննէս Թովմաճանեանին»²⁵.*
 - Սիրելի եւ հուատարիմ՝ կորօք մերում տիրա- ցու Յօհաննիսին Թովմանանն ինդայ ի Տէր...
 ... Ազնուութեան Բում՝ նուստ ծառայ Ստեփան- նոս վարդապետ Աքրահայր: Գրեցաւ ի Վէնէ- տիկ, յամի Տեառն 1750 ի մայիսի 9:

24 *Սա Թովմաճանեանի ձեռքով գրուած փաստաթղթի սեւագիր, կնիքներով վաւերացուած օրինակն է: Վերջում կայ Թովմաճանի կտր կնիքը, մէջտեղում քառաթեւ խաչի թեւերի մէջ, ակնյայտօրէն Մխիթարեան կնքադրոշ- մից որդեգրած Ո, Կ, Վ, Ա, տաւերը եւ հետեւեալ մակագրութիւնը՝ «Յի- սուսի Քրիստոսի ծառայ, Յովհաննէս», «Ալան Օղլու Յովհաննէս» հայե- րէն, մասնակիօրէն ջնջուած կնիքը եւ Բերեստեմի Սարգսի օսմաննրէն ան- ընթեանելի կնիքը: Ստորագրողների լրիւ ցանկն է՝ «գաղաացի հոնա Մուրատնիա, Ալան Օղլու հոնա Յովհաննէս, Թովմանանն հոնա Յով- հաննէս, հոնա Աւետիք՝ փեսայ Հանի Պալիի, Քարապաքա՝ Բերեստեմի հոնա Սէրգիս, Ասկէր Օղլու հոնա Յարութիւն, Քիւչիւկ ուստա հոնա Անտոն, Ջեմպրեկեան հոնա Պետրոս»: Հայ ուխտաւորների կողմից Հռոմի Հաւատաստիւթ Ժողովին յանձնուած վերլուչեալ հանրագրի խտախ- րէն ընագիրը տե՛ս Archivio di Propaganda Fide, SC Armeni, vol. 12, ff. 16r-19v, նամակը թուագրուած է 1750 թ. ապրիլի 15ով:*

25 *Թղթեայ գմուռէ կնիքը գրութեան ներքին ձախ անկիւնում, մէջտեղում՝ Մխիթարեան խաչը, թեւերի արանքում Ո, Կ, Վ, Ա. տաւերով:*

50r-63r

Այստեղից սկսում է Թովմածանի ինքնագրով
ԳԼՈՒԽ Ժ. Յաղագս ներկայանալոյ Թովմածանին յարեւմտից բերեալ նոր եւ ընտիր իրօք առաջի խօնայ Եաղուպին եւ յաղագս վաճառելոյ նմին նաև զակունս միսիւս տէ ֆրանջին եւս եւ համառօտ պատմութիւնն Եաղուպին եւ գլխատիլ նորին (1750 սկսեալ ի յուլիս 25էն):

63v-66v

ԳԼՈՒԽ ԺԱ. Յաղագս ընդարձակութեան Սեխրօսին եւ արագահաս մահ նորին եւ յաղագս անաչառասփիր Բարոզութեան պատրիարգ Յակօր վարդապետին եւ վասն հրահան մեքենային, զոր տեսեալ Քարաբաշեանն Աղէփանդր վարդապետն հրատարակեաց մինչեւ ի լսելիս թագաւորին: այլեւս ի վերայ մէրեան սանդրանցին:

66v-74v

[Էջի մէջտեղում նախկինում գրուած տեքստի վրայ փակցուած թղթիկի վրայ]

ԳԼՈՒԽ ԺԲ. Յաղագս Տերորդ գնալոյ Թովմածանին յԽապիա ընդ Տիմիթրաշլօյին եւ ՚ի Վիէննայէն մինչեւ ՚ի Վէնէտիկ գալոյն ընդ Յովիաննէս աղային եւ Միէլլ Նեկրիին կնքելն գեագութսն եւ ծանուցանելն Պէնկիլիէնց ՚ի Նարօլի ապտակաւ խոստովանիլն եւ զմեծ կեօք հագութ մի գնելն. ՚ի Հոռովմայ զմեծ արծաթեայ լուացից մի ընծայ առաքել վանաց. ՚ի Քեօծայ Բիւնօ Սրարբին ցաֆին ունելն զԹովմածանն եւ 40 ոսկի տուգանս տալն եւ ՚ի Վէննայ ընդ ճեքօրում Անդօնին եւ ՚ի Կոստանդնուպօլիս ընդ Սեղրօսի որդւոյ հանի Խաչատուրին վաճառակից լինիլն եւ ՚ի տան նորա անկանիլն ՚ի Բարեայ սանդրոցն եւ յետ երկուց ամաց քաժանիլն ՚ի նոցանէ:

72v-73r ի լրումն 73r-ի

*Ստեփաննոս Մելքոնեան արբաճօր տպագիր զարդանախշ գրութիւնը, որի մէջ արբաճօր ձեռքով լրացուած են միայն Թովմածանեանի անուն, ազգանուն եւ հայրանունը*²⁶.

- Յիսուսի Քրիստոսի ծառայ Ստեփաննոս տրուպ վարդապետ, Ընդհանրական Աքրայ՝ միանձանց հայոց՝ ի կարգէն Սրբոյն Անտօնի Աքրային...:

... Աւանդեցաւ գիրս յամի Տեառն 1754 ի յօգոս-

26

Կնքագրուած Միսիթարեան քառաթեւ խաչ՝ անկիւններում Ո. Կ. Վ. Ա. տառերով:

- տոս ամենան 15:
- Ստեփաննոս վարդապետ Արքայ հայր միանձանց հայոց բնակելոց ի կղզիև Սրբոյն Ղազարու, որ ի վեկետիկ ի կարգե Սրբոյն Անտոնի Արքայի:
- 74r լուսանցում
վիակցում թղթի վրայ
- Աւելացում է յետագայում յատուկ նշանով*
- Յաւուրս յայսոսիկ եկն ի պալատե քազաւորին արբունի պաշտօնեայ մի, աշնրպաշը օղու Սիւլիման աղան, ունելով արբունական ծաղիկ մի ակամբք գարդարեալ, որոյ մի էլմաս պոլանդի Բարն ի քաց անկեալ էր եւ որոնէր գտանել գֆար մի նոյն մեծութեամբ՝ առ ի դնել ի տեղի անկելոյն:
- ... Եւ հանեալ ետ Թովմանանին 30 դուռուշ, քե ներկայիս այսման գտաւ եւ զմնացեալն եւս խոստացաւ վնարել, յորժամ ձեռնհաս լինիցի (քեպետն ոչ եւս երբէք երեւ ինչ): Իսկ Թովմանանն արարեալ նմա խորտիկս նաշնցին անդ ուրախութեամբ եւ արձակեաց խաղաղութեամբ:
- 75r-90r
- Գ.Լ.ՈՒՅ ժԳ. Յաղագս գալստեան հայր Մկրտչին ՚ի Կոստանդնուպօլիս եւ ՚ի հրոյ գերծանիլն եւ զնոր ընկերութիւն առնելն Թովմանանին ընդ Արիփինեան Յովհաննէսին եւ թէ որպէս ՚ի տօնավաճառն Իսլիմեայու մարգարտով զնալն եւ մանտայի կեօնով զմարգարիտսն փոխելն եւ թէ որպէս յԵրուսաղէմ զնալն եւ մեծ շահով դառնալն եւ գտունն շինելն եւ զմէրեան սանդրանքն հաւատարով տալն Ծիւֆրի Յովհաննէսին եւ ընդ հայր Մկրտչին խոովիլն վասն որոյոյ իւրոյ Պողոսին եւ ՚ի Հոռոմ բողոքելն զմմանէ, այլեւս զկնի 5 ամաց որքան մեծ առ վնասու յընկերութենէն քաժանիլն:
- 80v-81r միջեւ
- Երուսաղէմի Թէոդորոս պատրիարքի օղջունագիրը՝²⁷ Յովհաննէս Թովմանանեանին.*

27 Թորոս կամ Թէոդորոս խորենացին Երուսաղէմի պատրիարք է եղել 1752-1761 թթ.՝ մինչեւ իր մահը: Տեքստը գրուած է երկթերթ փաստաթղթի մի: այն առաջին էջի վրայ: Գրութեան վերեւում կարմիր ձուածեւ կնիք՝ «Թէոդորոս պատրիարք Երուսաղէմի» մակագրութեամբ: Գրութեան առաջին ընդգծուած տողը գրուած է կարմիրով եւ ունի կարմիր-կանաչ թռչնակերպ լուսանցազարդ: Գրութեան յաջորդ թերթի հետեւում, երկու փոքրիկ գմուս կնքադրոշմներ զերեւում հասցէ՝ «Աստուծով հասցե գիրս ի Յապպե, ի

84v-85r միջև,
չհամարակալուած
երկու քերթ. նամակը
գրուած է առաջին
երեւէ էջերի վրայ

- Ի Սուրբ Երուսաղէմի Պատրիարք ի Տէր Թէո-
դորոս մեղապարտ վարդապետէս ժամանեցե-
զիր սիրոյ՝ ողջունի եւ Աստուածային յոգնագե-
ղումն օրհնութեան, գրութեան եւ մարդասիրու-
թեան եւ շնորհիմն Սուրբ տեղեաց տնօրինակա-
նաց Տեսուն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստո-
սի եւ երկնաման Աթոռոյս մեծի առ ի վերայ
հարագատ եւ հաւատարիմ յԱստուծոյ օրհնեալ
Պարոն Մահտեսի տիրացու Թումանանիցոյ եւ
նորանկ ուխտաւորիդ...:

*Թումաս Աեղորոսեանի նամակը Յովհաննէս
Թովմանանեանին.*

-Ի Սուրբ Երուսաղէմ ազնվամէծար եւ պատվելի
սիրելի եղբայր իմոյ Թումանան գառն Օհանէս
աղայիս սիրով իսօնարհարար սեջուն կու մատու-
ցանէմ հարցանելով զ'ազնվական եաթրըն, այսոյ
գրովս յայտ առնէմ:

Եղև ի Ըստամպոյ սէկտեմբերի 25ին 1758...

... Եթէ հարցանէ նէ 'նարօլի Ըստամպոյի վրա Բա-
նի քարա Բամպիֆօ կանէ' 52 քարա ասէս, որպի-
սի հրամանուցտ հէտ եւ ուրիշներու հէտ արէր
էնի' եւ կանէնի, ամա զայս հարցնէ նէ, կասէս չէ-
նէ քան մը մաս էր. սիրով սեջուն կանէմք հաճի
պապայիս մեր էնիշտէ աղաներէն մինչև զայս
սահաքս սեջ եւ Առօխէ էմի Աստուծոյ Բօհու-
չուն տահա սաղբարէնի. ինձմէ սիրով սեջուն
կանէմ ճամպագգատ Արութին աղայի Ըստէքան
աղային Եաբայու կումրուհնուն ապասրէ, որ
էղած ըստակ քաթերաներուն տա քօլիցա առնու
տէղս կու տամ այսքանս քավ է. սիրելի իմ Ալբ-
րիս վարքապէտ Խպրբզ Բշէգին պատերեալն
արավ զայս օյիներն Աստուած շնօր' արա եւ ռիջ
լէր ի տէր ի պարծանս: 'նվաստ ծառա քոյ Թու-
մաս Սեխրոսեան»²⁸:

ձևոն արևելցի պարոն մահտեսի տիրացու Թումանանին եւ աստուածա-
սէր իշխանին ի քարին, անրաց յուստեմէ: *Կողբին Թովմանանի ձևօք՝*
«1758 օգոստոս 22 յերուսաղէմէ Թորոս Պատրիարքէն որ ի Յոպպէ
առաքեաց»:

28

Վերջին էջում Թովմանանի ձևօքով գրուած է՝ «Սինեօր Անդօնիօ Տաուր
տի Ջերուզալէմ, 1758 սեպտեմբերի 25 Սեխրոսեան Թումաս աղայէն հա-
սա ի Սուրբ Երուսաղէմ»: *Հասցէն՝* «Աստուծով հասնի գիրքս ի Սուրբ

- 88v-89r միջև
ստանձնած, յաւկումք
88v-ի
- Հայր Մկրտիչ Անանեանի նամակը Յովհաննէս
Թովմաճանեանին²⁹.
- Բարեպաշտուն Քրիստոսասէր եղոր թօմաճա-
նին իմոյ սիրեցելոյ ... Յիսուս ինդայ ի Տէր...
Ընկալայ զիս... յաղագս իրակութեան առաժման
Պօղոս մանկանն սիրելոյ վասն որոյ... է ինձ
տալ պատասխանի, Բանգի գիտեմ ընդ ում իօ-
սիմ, զի ընդ ում... 1760 յուլիսի 26 նուաստ ծա-
ռայ Հայր Մկրտիչ:
- 89v լուսանցում
փակցում քերթիկ՝
հետագայում աւելա-
ցում թովմաճանի
ձեռով
- 1761 նոյեմբերի 11ին 52 անձինք Բիրելեն գա-
ցին վասն հալածանաց եւ յետ 31 աւուրց դեկ-
տեմբերի 13ին ծնաւ սուրբան Սելիմն եւ 14ին
ազատեցան ի Բիրելեն այն 52 անձինքն միջնոր-
դութեամբն Տիգրայու Միլայի աղային: Եւ եօթն
օր տոնանմայ եղև, 3 օր եւս ծովու տոնանմայ
եւ յետ 28 ամաց 1789 ապրիլի 7ին քազաւորեա-
ց:
- 90v-99r
- ԳԼՈՒԽ ԺԴ. Յաղագս նալօղու Յակօր պատրի-
արգի գրելոյ գրուրքն ի Հոռմ եւ վասն քալուն-
ցի Տէր Մանուկին, Տիպանեանց Տէր Սերգիսի եւ
վրացի սպիտիչ Յովհաննիսի չարութեան գոր-
ծոց, որով հալածեալ եւ ըմբռնեալ գթովմաճանն
կամէին հանել ի կախաղանն. քայց նա զերծաւ
աստուծով եւ զգուրն, զոր պեղեցին վասն նորա՝
ինքեանք անկան անդ, զոր գործեցին:
- 99r-107r
- ԳԼՈՒԽ ԺԵ. Յաղագս չուելոյ թովմաճանի ի
Կոստանդնուպոլսոյ ընդ Պօղոս որդուկն ՚ի յն-
գիպտոս եւ անտի ընդ Կարմիր ծով գնալն ՚ի
Ճիստեմ եւ անտի անցանելն ՚ի Աֆրիկէ եւ գնալն
՚ի Հապէչստան ՚ի Բաղաբն Կեօնտէր:

էրուսաղէմ իմ պատվէի թումաճան գաւտ Օհանէս աղայիս ի քարին».
եւ «Signore Giovanni Tomagiani Gerusalemme»: *Թովմաճանի ձեռօք՝ «Ճիվան*
Տամիանի գօնսօյ տի ինկլէգի. քատրի Ֆելիչէ». *ապա՝ փոքրիկ զմուկ կնիք.*
²⁹ *Հասցէն Հ. Մկրտիչ Անանեանի ձեռօք՝ «Հասցէ գիրս ի ձնու քարեպաշ-*
տուն եւ Բրիստոսասէր եղոր թօմաճանեանց մղոտսի Յօհաննէսին, իմոյ
սիրեցելոյն մտերմութեամբ, ի քարին, ի Սամաթիա, ի Ստամպօլ»: *Թով-*
մաճանի ձեռագրով ծրարի վրայ՝ «1760 յուլիսի 26 ի Հայր Մկրտչէն չար
բոլորիզայի գիրն է»: *Նամակը գտնուում է շատ վատ վիճակում, թանաքա-*
կեր, ծալտեղերում թուղթը փշրուած, տեքստը մնասում է եւ ենթակայ
չէ լիակատար վերականգնման:

107r-126r

ԳԼՈՒԽ ԺԶ. Յաղագս, թէ գիա՞րդ ներկայացաւ թովմանան առ[աջի] Իթեկէ Բագուհունն եւ Բագաւոր Բողան նորին եւ թէ ետ նոցա զընծայս իւր մեծագին եւ յաղագս գանձապետ լինելոցն եւ ապա ելանելն ՚ի պաշտոնէն եւ Բողուլն գորդին իւր զՊողոսն անդէն եւ դառնայն ՚ի Յիստն եւ եւս քանի ինչ ՚ի վերայ արարողութեանց Հապէշից:

115v մէջտեղում նախկին տեխստի վրայ փակցուած Բողբիկ՝

- ի պալատ Բագաւորի եւ զնացեալ առ Բագաւորն Գլաւտիօյ] եւ ասէ ցնա, թէ ես ընդ Բահաւայից իմոց չեմք քաւական հովուել զբողոր Բագաւորն, ուրեմն այժմ, որ այս եկնէրայն, որ յետս դառնայոց է, առաջեսցում ընդ նմա առ Բողբուկէզ Բագաւորն Յովհաննէս երրորդ, նախ Բողբուս շնորհակալութեան ի կողմանէ Բումմէ եւ ի բողոր իշխանաց եւ ի ժողովրդոց Բող...:

115v-116r միջև ստանձուել է մի նոր Բողբիկ եւ կրկին համարակալուել 223 եւ շարունակուել 115v էջին փակցուած Բողբիկի տեխստը

- եւ Բագաւորն Գլաւտիօյ] արեայ՝ որդի Դաթի Բագաւորին Հապէշու, յոյժ հաւանցաւ ընդ այս խորհուրդ եւ ետ զբել այն մեծապատի Բահաւային յարիներէն առ Յովհաննէս Բագաւորն եւ առ Պապն...:

- ... Ի տունցեան ի Կեօնտէր շրջէին Բարգուրեամբ եւ ի յերեկոյնին գնային ի Յրէմօնայ գիւղն, ուր կազմեցին վանս եւ եկեղեցիս եւ պտուղք քազումք՝ լինէի[ն] եւ յուսարտէին:

117v (226) յուսանցում փակցուած Բողբիկի վրայ ի լրումն նոյն էջի տեխստի

եւ ի ծնանիլ երայտայի՝ արու եւ թէ էզ, 8-օրեայ Բլպատեն եւ Բառասնորեայ մկրտեն եւ դրոշմեն: Եւ դրոշման իւղն է ձեթն, գոր օրհնեն եւ գործածեն:

Եւ այս ծնեալ մանուկ յորժամ լինի երեք ամաց, երկայն մկրատով հատանեն զծայր փոքր լեզուին, որ ի կոկորդն, զի ի մեծանայն քարոք խօսեսցի: Յիմարութիւն մեծ ընդ տգիտութեան, որով ի գուր ցաւով տանջեն զմանուկն: Քանզի ասեր նոցա թովմանանն Տեսէ՛ք գորդեակն իմ զՊողոս, որ Բան զծեզ քարոք խօսի եւ չեմք հատեալ զփոքր լեզու նորա: Չայս այսպէս ասելով, ծաղր առնէր զնոսա:

117v-118r միջև չհամարակալուած Բողբիկ

Թերթի ր երեսին, ի լրումն թ. 118r տեքստի, եկեղեցու յատակագծի պատկեր՝ - Ձեւ եկեղեցեաց հապէշից

124r լուսանցում
ստննում երկու
չհամարակալում
թերթ, վերջին էջը՝
դատարկ

ի լրացումն 124r-ի տեքստի՝

- Եւ ընդ ժամանակն ընդ այնոսիկ էր ի կեօն-
տէր կոստանդնուպօլսեցի ոսկերիչ ոմն հայ երի-
տասարդ Ստէփան անուն, յոյժ գորեղ եւ ունէր
բազուկ քաջութեան: ...

- ... Ահա այս է վախճան գշափ անձին ո՛չ նանա-
չողաց եւ յիմար ամբարհաւան գոռոզացելոց, յո-
րոց փրկեսցէ գմեզ Փրկիչն ամենայնի, ամէն:

125v-126r (242-243)
արանում 1 թերթ

*էջի առաջին եւ զէպի ներս ծալուող կողմում՝
Եթովպիայի թագուհու կնքադրոջմբ, թուղթը
ծալուելուց յետոյ այն վերացուել է եւս մէկ
հայեւապոլսկ պատկերի:*

126r-134v

ԳԼՈՒԽ ԺԵ. Յաղագս գնալոյ թովմանանին ի
Ճիտտէն ի Հնդկիս ի Սուրբ Եւ անտի մինչեւ
ի Մատրաս հասանիլն եւ անդէն արարեալ գոր-
ծողութիւնքն:

128r

127v *վերջին նախադասութիւնը (Եւ ի մէջ Սուրբ-
բու ի շրջիլն ընդ պարոն Գրիգորին յաւուր մի-
ում) ձեռքով ջնջուած է հեղինակի կողմից, իսկ
յաջորդ էջի շարունակութիւնը ստնծուած է
թղթով: Ձգուչօրէն բացուած թղթի տակ
թաքցուել է հետեւեալ հատուածը.*

- սաէ ցթովմանանն. Ես տարայց գմեզ ի կրպակ
ինչ եւ գծադրական իրսն կոսպաշտից ցուցից
էնգ: Եւ գնացին ի կրպակն յայն, յորում նստեալ
կայր յաղթանդամ մերկ ոմն յիսնամեայ: Եւ այ-
նովիկ կանայք, որք ո՛չ ծնանէին գաւակս, եկեալ
ի կրպակն անդ, արձակեն գճնոս իւրեանց յան-
դամն այն մերկ մարդոյ, ապա նոյն ձեռօքն շփշ-
ըփեն գպորտս իւրեանց առ ի յղանալ զգաւակս:
Եւ այս մերկ մարդն ամենեւին ո՛չ շարժի եւ ո՛չ
իօսի, այլ նստեալ կայ անմոռնց իբր գլիմար
վասն այնց կանանց, որս աւուրս ի շարքառ
ժամս երիս միայն եկեալ նստի:

135r-140r

ԳԼՈՒԽ ԺԸ. Յաղագս թովմանանին ի Մատրասէն
ի նեկէրքան գնալոյն վասն Շիւբրի Յովհաննէ-
սին տուեալ մէրնան սանդրանքին եւ դարձն
վերստին ի Մատրաս եւ վասն ի յերոպ գնալոյ
եւ ի նաւ մտանելն:

140r-143r

ԳԼՈՒԽ ԺԹ. Յաղագս չուելոյ թովմանանին ՚ի
Մատրասէ ՚ի Մուրիս կղզին եւ յելանելն ՚ի նա-

- 142r լուսանցքում
փակցուած քերթիկի
վրայ
- ւէն ինկիլիզին եւ մտանելն ճէնէրային ձեռո՞ք 'ի
Ֆրանցըզը նաւն եւ գնալն 'ի Լորեան եւ անտի
յինկիլիքեոայ:
- Յետ անցանելոյ ընդ Գլոլիսն Բարի Յուսոյ, յա-
ւուր միում տեսին ի հեռուստ իբրեւ գառա-
գաստ մի մեծ քարձրացեալ ի վեր յերեսս ովկի-
անոսի եւ համարեցան նաու առագաստ լինիլ...
- ...Եւ ընդ մերձենայն արձակեցին եօթն գնտա-
կս, յորոց դիպիլ միոյն առ պալենայն, ի վեր
նստեալ քոյր մարմնովն ի ծովէ իբր մեծ կղզի
մի փայտեալ, որ յայնժամ տեսին զմեծութիւն
մարմնոյ պալենային, որ անտանելի եւ անչափ
ինչ էր, որ եւ մեծ երկիւղ կրեցին քնամբն:
- 143v-148v
- Գլոլիս Ի Յաղագս քէ 'ի Լօնտրա ո՛րպիսի քա-
րուքեամբ ընկալաւ Թովմասանն զապրանս իւր
'ի մատր Հէնրի Վանսիքարտէն եւ քէ զգօնդրա-
պանտ արարեալ պէլծովարն, այսինքն քանգե-
հիրն որպիսի կերպիւ ազատեաց եւ մինչեւ 'ի
Մարտամ Յօլանտայ եւ 'ի Բառիզ գնալն:
- 146r-147r
- Գովարանութիւն Լօնտրայի արարեալ 'ի Թովմա-
սանեան մահտեսի Յովհաննիսէ, որոյ տեսեալ
զվայելչութիւն քաղաքին ստիպեցաւ գրել ...
- 148v-158r
- Գլոլիս ԻԱ. Յաղագս ի Բառիզ, որով միջոցաւ
Թովմասանին ի վերսաւիեոյ գնալն եւ ներկայա-
նալն առաջի 15երրորդ Լուվիզի քագաւորին եւ
ապա իմանալն քագաւորի զանգոսնիլն Թովմա-
սանին յիշխանէ ումեմնէ եւ ա՛ւտրիլն նոյն իշ-
խանին եւ մինչեւ ի Հոռոմ եւ ի 'նապօլի հասա-
նիլն Թովմասանին:
- 151v-152r միջեւ
- Լուի ԺԵ-ի գրուածիւնը Յովհաննէս
Թովմասանեանին՝*
De par le Roy
Atous gouverneurs et nos Lieutenants Généraux en nos
provinces et armées, gorneurs particuliers et
Commandans de nos Villes, Places et Troupes, Et à tous
autres nos Officiers Justiciers et Sujets qu'il appartiendra,
Salut.
... Donné à Versailles le vingt six novembre 1769
Louis
Par le Roy
Le Duc De Choiseul

153v լուսանցճում
փակցում Բերքիկի
վրայ

- Ես՝ Թովմանան այս կտոր բուրբս դեկտեմբերի մէկ 1769 ի Բարիզ գրեցի բազաւորին գերեզմանին վրայ: Ի Բարիզ Սան Սելեստան եկեղեցին մին Հայոց բազաւորի գերեզման կայ, որոյ անունն բազաւորին է Լէօ Լուզիկան Արմէնօրում ի թուին Քրիստոսի 1393ին

153r-154v միջև
ամբացում
գրութիւն, ի լրումն
154v-ի տեխտի

4. Պոյսի Գրեգոր պատրիարքի գրութիւնը³⁰
Յովհաննէս Թովմանանիին.

- Գերագնի սիրելոյ իմոյ, յոյժ հարգատի եւ ներքին բարեկամի պարօն մահտեսի Յօհաննիսի աստուածասիրիդ, ընծայի ողջոյն եւ օրհնութիւն սէր եւ ինդութիւն ի տէր.

... Ամի փրկութեան մերոյ 1769 դեկտեմբերի 8 ըստ լատին:

Պաշտօնեայ Աւետարանի տեառն եւ Կոստանդնուպօլսոյ Պատրիարք ապարդիւն Գրեգոր Վարդապետ. յՍտամպօլ:

158v-165r

ԳՒՈՒԽ ԻՔ. Յաղագս ՚ի Նաբոյիէն վերստին ՚ի Հոռոմ եւ ՚ի Վենետիկ դառնալոյ Թովմանանի եւ ընդ հայր Մկրտչին խաղաղելոյ եւ Պետրոս որդւոյն գալն եւ ՚ի վանս դնելն: Ընդ ծպտեալ տօժի հերժելով խօսիլն եւ Պողոս որդւոյն ՚ի Հապէշէն գալն ՚ի Վենետիկ եւ պատմութիւն նորին ելանելն ՚ի Հապէշէն եւ ընդ Յովհաննէս աղայի վասն Բեմետիկի գժտիլն եւ հաշտիլն եւ ապա ընդ Պողոս որդւոյն ՚ի Կոստանդնուպօլիս գնալն. նեղիլ եւ չարչարիլն ՚ի Մոսկովո նաւուց ՚ի Քանապարհիլն եւ մինչև ՚ի Կոստանդնուպօլիս հասանելոյ³¹:

Ընդգծուած մասը աւելացուել է հետագայում որպէս ենթավերնագիր.

- Պատմութիւն Պողոս որդւոյն յելանելն ՚ի Հապէշէն եւ գալ գտանելն գհայրն ի Վենետիկ եւ ես սկսան հարցանել Պողոսին՝ երէ գիա՞րդ ելեր ի Կեօնտէրէն, ինդրեմք պատմեա մեզ: Եւ

162v-163r միջև
հետագայում աւելացում եւ էջակալում (316ա-բ)
Բերքի վրայ ի լրումն
162v-ի

³⁰ Գրութեան ետեւում, ծրարի վրայ հասցէն՝ «Աստուծով հասցէ գիրս ՚ի ձեռս Թումանեանեան պարօն մ[ա]խ[ա]լ[ա]յի Յօհաննիսին բարեաւ»:

³¹ Վերնագրում ընդգծուած հաստեածը Թովմանանի կողմից աւելացուել է հետագայում, ընդ որում առաջին երկու բառերը բուն տեքստում աւելի փոքր տատերով, իսկ շարունակութիւնը 158v լուսանցքում փակցում Բերքիկի վրայ:

նա սկսաւ պատմել մի բառ միոջէ:
 - ... Բայց նախապահին ոմանք ի սպասաւորացն գողացեալ են զ20 վաճիէ ոսկին, որ է 480 դուրուշ եւ փախուցեալ են: Եւ ապա եմուտ ի նաւակն Կարմիր ծովուն էանց ի ձիտտէ եւ անտի գնացեալ է յԵգիպտոս: ...

165r-176r
 ԳԼՈՒԽ ԻԳ. Յաղագս արարեալ վաճառիցն եւ մեծի հիւանդութեան եւ թշկուքեան Թովմանանի եւ յաղագս որպիսի եղանակաւ վաճառակաւնապետ լինելոյ Քարա Հալիլ քաշայի Եգիպտոսի եւ թէ որպէս գնացեալ յԵգիպտոս ծառայեաց նմա եւ յետ վեշտասան ամսոյ եղև վաճառակաւնապետ եւս սուրբան Համիտ թագաւորին Լալալին եւ դարձաւ ընդ նմա ՚ի Կոստանդնուպոլիս:

171v-172r միջեւ ստանձուած բերք, ի լրումն 172r տեմետի: Փաստաբղթի ք էջում՝

Հայր Պօղոս Մէհէրեանի նամակը Յովհաննէս Թովմանեանին՝
 - Բարեպաշտօն եւ Քրիստոսասէր ազնուականիդ պարոն մահտեաի Թովմանանիդ երախտաւորի մերում քազում սիրով ողջոյն ի տէր:
 Ձիք եւ չիք ոք ի մարդկանէ, որ միանգամ եւեր ընդ ումեք աղիւ եւ հացի վայելեալ ի բարիս նորին գնոյն հատուկդի շիջուցանել ջանացէ թէւ ի բարբարոսաց բարբարիկոն ոք իցէ, այլ հանապազ գմտաւ ածելով գհատուցումն ի Տեառնէ խնդրելով երախտեացն փոխարէն: Իսկ իմ ոչ եթէ մոռանալով գմարդասիրութիւնդ, զոր մեզ արարիր ի պանդխտութեան մերում...
 - ... Յամին 1774 ի հոկտեմբերի 16, ի մայրաքաղաքին Կարնոյ:

Նուաստ ծառայ Հայր Պօղոս Մէհէրեան կրօնավոր Միսիբարեան:

172v-173r միջեւ ստանձուած երկու *Երուսաղէմի Պօղոս պատրիարքի ողջունագիրը Յովհաննէս Թովմանեանին*³².

32. *Թուշնագարդ գրութեան վերելում Տիրոջ պատկերով կարմիր երկշրջանագիծ պատրիարքական կնիք՝* «Է. Յ[խուս]ի Ք[րիստոս]ի ծ[ա]ն[ա]յ] Պօղոս Վ[ա]րդ[ա]պետ Պ[ա]տր[իարք] Ս[ր]բ[ու]կ Երուսաղէմայ, ք[ա]լ[ի]ն ՌՄԺԷ» մակագրութեամբ]: *Հասցէն՝* «Աստուծով հասցէ գիրս ՚ի քաղաքն Մըսըր. ՚ի ձեռն Թովմանեանեան բարեպաշտօն մահոյեաի Յով[ի]աննէս յարգելի ամիրային, ի քարին»: *Թովմանեանի ձեռքով՝* «1773 սեպտեմբեր 12. Երուսաղիմէն գերերջանիկ Պօղոս պատրիարքէն. հասաւ յԵգիպտոս հոկտեմբեր 25ին»: *Ընդգծուած տողը գրուած է կարմիր մեխանով:*

չհամարակալուած
երկծայ քերք ի
լուսն էջ 172v
տեքստի

- Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ շնորհիւ նորին Սրբոյ Բաղաբիս Երուսաղէմի Պատրիարք ի տէր Պօղոս Վարդապետէ վերածամանեալ հասցէ եւ ընծայեսցի ողջոյն տերունական եւ սէր անկեղծ, ընդ որս եւ աստուածային զուարթացուցիչ օրհնութիւնն եւ շնորհ սրբազմասուրբ գերահրաշ Աստուածաշրջիկ վայրացս՝ վաղեմի սիրելւոյդ մերում եւ անհամեմատ ցանկալւոյդ բարեպաշտօն մահտեսի Յովհաննէս մեծապատիւ փառաւոր ամիրայիդ եւ առընթեր սիրոյդ գտանցելոց քոյինասիրաց հաւատարմիցն...

176v-179v

- ... Գրեցաւ ի Սուրբ Երուսաղէմ, ի ՌՄԻԲ քուին, սեպտեմբերի ԺԲ [12]ին ի Սուրբն Յակօբ: ԳԼՈՒԽ ԻԳ. Յաղագս ոչ միայն ընդ վայր լինելոյ յուսոյն Թովմանանի ի վերայ այս Ապտուլլահ լալային, այլեւս վասն նորա կորուսանելոյն գինչս քազումս եւ յաղագս վաճառակցութեան ընդ որդւոց իւրոց եւ ամուսնութեան որդւոյն հանի Աքրահամի եւ յաղագս գալստեան հայր Մկրտչին ՚ի Կոստանդնուպօլիս եւ ախորման նորա եւ եւս յաղագս հրաշից տէր Կոմիտաս Նահատակին:

179v-186v

ԳԼՈՒԽ ԻԵ. Յաղագս մեծի հալածանացն եւ գժտելոյ Թովմանանին ընդ Եամալը Սարգսին եւ երկիցս ներկայանալոյ ի մէջ ամբոխին առաջի Ջաֆարիս պատրիարգին եւ ապա թագչելոյն եւ վերջապէս չհանդուրժեալ գնալոյ յԻլահ՝ ի Պուրբէշտ վասն առելորոյ:

187r-190r

ԳԼՈՒԽ ԻԶ. Յաղագս երկու ամ եւ կէս նստելոյ Թովմանանին ՚ի Պուրբէշտ եւ ընդ Ալեքսանտրօպէլին ընտանութեանն եւ յաջողութեան առելորոյ ակնեղինաց եւ պանրի: Եւ եւս վասն Ջաֆարիս պատրիարգին փոփոխութեանն եւ ՚ի տեղի նորա չար Ովանէս պատրիարգի նստելոյ, եւ այլ մինչեւ ՚ի Կոստանդնուպօլիս դառնալոյն:

190v-195r

ԳԼՈՒԽ ԻԷ. Յաղագս դեռ տնելոյ հալածանաց ի ժամանակս Յովհաննէս պատրիարգի եւ Թովմանանն ՚ի յերկիրդէն Ֆերման առնելոյն եւ ի Պեյօղլուն գտուն գնելոյն. Ճամպագն ՚ի Թերսիսանան վախճանելոյ եւ որպէս թաղելոյն. Ովանէս պատրիարգն փոխեցին եւ Ջաֆարիան վերստին կարգեցին եւ ուղղափառ՝ գնացեալ շնորհաւորեցին եւ նա զչորս անձինս եհան ՚ի Թերսիսանա-

յէն, յորոց մինն Անտոնն էր, գնացեալ 'ի Գարդալ եգիտ գՅովհաննէս պատրիարզն եւ թակեաց զնա:

195r-200v
